USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ՄԵԴԻԱ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆԻ
ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17 - ՄԱՐՏԻ 15

Այս զեկույցը պատրաստել է Երևանի մամուլի ակումբը «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակում: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ և իրականացվում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից: Զեկույցի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2020թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17 - ՄԱՐՏԻ 15)

ՏՎՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ընդգրկել է 2020թ. փետրվարի 17-ից (քարոզարշավի պաշտոնական մեկնարկից) մարտի 15-ն ընկած ժամանակահատվածը՝ մինչև այն պահը, երբ մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց արտակարգ դրություն, և հետաձգվեցին թե հանրաքվեն, թե քարոզարշավը: 2020թ. մարտի 16-ին ընդհատվել է նաև մշտադիտարկումը, և այն կվերականգնվի քարոզարշավի հետ միաժամանակ: Հետազոտության օբյեկտ են դարձել համազգային վեց (Հայաստանի Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք, «Շանթ») և մայրաքաղաքային երկու («Արմնյուս», 5-րդ ալիք) վերգետնյա հեռուստաալիքների պրայմ-թայմին հեռարձակված հաղորդումները: Մշտադիտարկման ուսումնասիրության առարկա են դարձել հետազոտված ԶԼՄ-ների անդրադարձները հանրաքվեի թեմային: Ընդ որում, համապատասխան նյութերը բաշխվել են երեք պայմանական թեմատիկ կատեգորիաներով՝ «Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը», «Վերաբերմունքը հանրաքվեին ներկայացված հարցին» (քվեարկությանը չմասնակցելու օգտին արված արտահայտությունները գնահատվել են որպես «ոչ»-ի դիրքորոշում) և «Հանրաքվեի կազմակերպման գնահատականը»:

Կիրառելով հետազոտության քանակական և որակական մեթոդներ՝ Երևանի մամուլի ակումբի մշտադիտարկման թիմը պարզել է այս կամ այն դիրքորոշմանը անդրադարձների եթերաժամանակի ծավալը և հաճախությունը, ինչպես նաև վերաբերմունքը (դրական, բացասական, չեզոք) վերը թվարկված երեք թեմաներին: Այս տվյալները բաշխվել են հանրաքվեի քարոզարշավի կոնտեքստում արտահայտությունների հեղինակների տարբեր խմբերի միջև *(մշտադիտարկման մեթոդաբանությունը տես ներքևում)*: Նմանատիպ մոտեցումը թույլ է տալիս առաջին հերթին բացահայտել հետազոտված ԶԼՄ-ների կողմից հանրաքվեի նկատմամբ ուշադրության, ինչպես նաև՝ քարոզարշավի լուսաբանման հավասարակշռվածության աստիճանը և ի վերջո՝ նրանց պատրաստակամությունը՝ օգնելու ՀՀ քաղաքացիներին կատարել հանրաքվեի նկատմամբ դիրքորոշման գիտակցված ընտրություն:

ԱՄԵՆԱՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆԸ հետազոտված ԶԼՄ-ների կողմից արժանացել են հանրաքվեի քարոզարշավի կազմակերպման հետ կապված հարցերը: Այս առումով շատ էին տեղեկությունները «Այո» և «Ոչ» քարոզչության կողմերի ձևավորման և գործունեության, քարոզարշավի և քվեարկության անցկացման օրենսդրական

կարգավորման, ընտրական հանձնաժողովների կազմի նկատմամբ վերաբերմունքի մասին, ինչպես նաև ներկայացվում էին ողջ գործընթացի ազատական, թափանցիկ և արդար լինելու մասին կարծիքներ։

Թեմատիկ այս կատեգորիան «լեցուն» էր գրեթե այնքան, որքան մյուս երկուսը՝ միասին վերցրած։ Անմիջականորեն հանրաքվեին ներկայացված հարցին առնչվող լուսաբանումը թեմային անդրադարձների հաճախությամբ և ծավալով մի փոքր գերազանցեց հանրաքվեի նպատակահարմարության և օրինականության թեմային։ Եթերում առկա և հեռակա առարկայական բանավեճեր ծավալվեցին։ Մի կողմից խոսվում էր Սահմանադրական դատարանի շուրջ ճգնաժամի հաղթահարման անհրաժեշտության և դրա միջոցով անկախ արդարադատության համար դուռ բացելու և «թավշյա» հեղափոխության օրակարգն ամբողջացնելու մասին։ ՍԴ յոթ դատավորներին լիազորություններից զրկելու կողմնակիցները պնդում էին, որ այդ մարմինը քաղաքականացվել է, գործում է նախկին իշխանությունների շահերով և խոչընդոտում է պետության զանազան ոլորտներում բարեփոխումների իրականացմանը։

Մյուս կողմից բերվում էին փաստարկներ հանրաքվեի անցկացման նախաձեռնության ոչ սահմանադրական լինելու օգտին։ Իշխող քաղաքական ուժի հասցեին հնչում էին մեղադրանքներ, որ ձգտում է իրեն ենթարկել ՍԴ-ն և դատական իշխանությունն ընդհանրապես, 2.5 մլրդ դրամ է ծախսում հանրաքվե անցկացնելու վրա մեն-միակ նպատակի համար՝ ազատվել Բարձր դատարանի անցանկալի նախագահից, փոխանակ հետևողականորեն աշխատելու երկրի Հիմնական օրենքն ամբողջապես նորացնելու ուղղությամբ։ Քաղաքական ղեկավարության ընդդիմախոսների մի մասը պնդում էր, որ որոշումների ընդունման պատասխանատվությունն այն իր վրայից դրել է քաղաքացիների վրա և փորձում է վերջիններիս ձեռքով լիակատար վերահսկողություն հաստատել իշխանության բոլոր ճյուղերի նկատմամբ։ Նաև կասկած էր հայտնվում, որ վերահսկողությունը, մասնավորապես ՍԴ-ի նկատմամբ, քաղաքական ղեկավարությանն անհրաժեշտ է ազգային շահերին հակասող նպատակներին անարգել հասնելու համար։ Այս շարքում առանձնահատուկ տեղ էին գրավում կորոնավիրուսի տարածման պատճառով հանրաքվեն հետաձգելու կամ չեղարկելու կոչերը, ինչպես նաև այն, որ Հայաստանի սահմանների լարվածությունը կապվում էր հանրաքվեի ժամանակավրեպ լինելու հետ։

Առաջին (հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը) և երրորդ (հանրաքվեի կազմակերպումը) պայմանական թեմաներով կատեգորիաների նկատմամբ դիրքորոշումների հարաբերակցությունը, 2020թ. փետրվարի 17-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքներով, ակնհայտորեն իշխող քաղաքական ուժի հակառակորդների և քննադատների օգտին է եղել։ Հետազոտված ութ ԶԼՄ-ների հանրագումարային արդյունքներով, հանրաքվեի անցկացման օգտին արձանագրվել է 33 անդրադարձ, դեմ՝ 186, չեզոք՝ 40 *(այստեղ և այսուհետև՝ մշտադիտարկման քանակական արդյունքները տես ներքևի աղյուսակներում)*։ Հանրաքվեի կազմակերպման առնչությամբ եղել է 15 դրական, 159 բացասական և 847 չեզոք անդրադարձ։ Փաստորեն, միջանկյալ առաջին հաշվետվության համեմատությամբ, որն ընդգրկում էր 2020թ. փետրվարի 17-ից մարտի 4-ը, այս երկու կատեգորիաներում անջրպետը խորացել է բացասական գնահատականների օգտին։ Սա տեղի է ունեցել նաև այն պատճառով, որ հետազոտված

հեռարձակողներից մի քանիսը ուշադրության են արժանացրել մետրոյում տեղի ունեցած միջադեպին, երբ մի աղջիկ պատռեց քարոզչական բուկլետը և այն նետեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղղությամբ: Այս տեսաշարը, թեև այստեղ բացակայում էր դիրքորոշման խոսքային արտահայտումը, մշտադիտարկման թիմի կողմից արձանագրվել է որպես բացասական անդրադարձ «Այո» կողմի քարոզարշավին:

Թեմատիկ երկրորդ կատեգորիայի դեպքում (վերաբերմունքը հանրաքվեին ներկայացված հարցին) որոշակի առավելություն է ստացել «այո»-ի աջակցությունը՝ 214 անդրադարձ «ոչ»-ի 152-ի դիմաց և 101 չեզոք: Եվ այստեղ էլ աճել է միջանկյալ առաջին հաշվետվության ժամանակ արձանագրված տարբերությունը հօգուտ «այո»-ի: Եթե մինչև 2020թ. մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում «այո»-ի առավելությունը պայմանավորված է եղել «Այո» քարոզչության կողմի համար դրամահավաքի միջոցառման ակտիվ լուսաբանմամբ, որին մասնավորապես հատուկ ուշադրություն է հատկացրել «Արմնյուսը», ապա հաջորդող օրերին այդ առավելությունն ամրապնդվել է հիմնականում Հ2-ի և 5-րդ ալիքի հաշվին: 2020թ. մարտի 5-15-ն ընկած ժամանակահատվածում «այո»-ի դրական հաշվեկշիռ արձանագրվել է նաև ՀՀՀ Առաջին ալիքում, «Երկիր Մեդիայում», «Կենտրոնում» և «Արմենիայում»: Թեմատիկ երկրորդ կատեգորիայի արդյունքների վրա ինչ-որ չափով ազդել է այն հանգամանքը, որ պաշտոնապես գրանցված «Ոչ» կողմը շեշտը դնում էր ոչ թե քարոզչության, այլ ընտրական ընթացակարգերի պատշաճ պահպանման վրա: Այսպես, դրա ներկայացուցիչները որպես խախտում նշում էին Ազգային ժողովի ամբիոնից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի կոչը՝ քվեարկել Սահմանադրության փոփոխությունների օգտին, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից Սյունիք քարոզարշավի ուղղաթիռով մեկնելը և այլն:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔՆԵՐԻՑ 2020թ. փետրվարի 17-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում հանրաքվեի քարոզարշավն առավել ինտենսիվ լուսաբանել է «Արմնյուսը»: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ տվյալ հեռարձակողն ունի լրատվական-վերլուծական և հասարակական-քաղաքական ուղղվածություն: Ընդհանուր ուղղվածության հեռուստաալիքներից քարոզչության լուսաբանման ինտենսիվության տեսանկյունից գրեթե նույն ցուցանիշներն ունեն ՀՀՀ Առաջին ալիք-ը և «Երկիր Մեդիան»: Դատելով փետրվարի 17-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման ցուցանիշներից՝ «Արմնյուսը», ՀՀՀ Առաջին ալիք-ը և «Երկիր Մեդիան» կարելի է պայմանականորեն դասել «ակտիվ լուսաբանողների» շարքին: Մինչև քարոզարշավի ընդհատումը, հանրաքվեի հետ կապված հարցերի ամենաքիչ լուսաբանումը հետազոտված ԶԼՄ-ներից արձանագրվել է «Արմենիայում»: Նրանից ավելի մեծ ուշադրություն հանրաքվեի նկատմամբ հատկացրել է Հ2-ը, սակայն լուսաբանման ինտենսիվության տեսանկյունից այն նաև հայտնվել է ոչ միայն հանրաքվեի թեմային առավել շատ եթերաժամանակ հատկացրած երեք առաջատարներից, այլ 5-րդ ալիքից, «Կենտրոնից» և «Շանթից» հետո, որոնք այս առումով «միջին» ցուցանիշներ ունեն:

ԱՅՍՏԵՂ ԱՐԺԵ հերթական անգամ նշել այն հանգամանքը, որ Հայաստանում թվային ռեժիմով վերգետնյա հեռարձակումն իրականացվում է հանրային մուլտիպլեքս օպերատորի միջոցով, իսկ դա հեռուստաընկերությունների վրա որոշակի պարտավորություններ է դնում: Մասնավորապես, լրատվական-վերլուծական և

ընդհանուր ուղղվածության լիցենզիա ունեցողներից հարկ է ակնկալել պատշաճ ուշադրություն հանրաքվեի թեմայի նկատմամբ, ինչպես նաև օժանդակություն հասարակայնությանը՝ քվեարկության նախօրեին գիտակցված կողմնորոշման հարցում: Ինչ որոշում էլ կայացնի Հայաստանի քաղաքացին՝ «կո՞ղմ» թե՞ «դեմ» արտահայտվել Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնությանը, թե՞ բոյկոտել հանրաքվեն, դա պետք է լինի առավելագույն տեղեկացվածության, ամենատարբեր փաստարկների համադրման արդյունք: Իսկ ԶԼՄ-ները, առաջին հերթին՝ վերգետնյա հեռարձակողներն այս իմաստով հասարակության հիմնական օգնականը պիտի լինեն:

ՎԵՐՈՆՇՅԱԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ առավելապես վերաբերում է Հանրային հեռուստառադիոընկերությանը: Ընդհանուր առմամբ, Հանրայինի **Առաջին ալիքը** հանրաքվեի թեմայի հիմնական ասպեկտներին բավարար ուշադրություն է հատկացրել և մշտադիտարկման առաջին փուլի արդյունքների համաձայն, ներկայացրել քաղաքական-իրավական այս միջոցառմանը հայացքների լայն սպեկտր: Հանրային հեռարձակողը հատկապես հավասարակշիռ լուսաբանում է իրականացրել հանրաքվեին ներկայացրած հարցի առնչությամբ (թեմատիկ երկրորդ կատեգորիա):

«Արմենիա» հեռուստաալիքը, ինչպես վերևում նշվեց, քարոզչության տվյալ փուլում դրա լուսաբանումը չի դիտարկել որպես իր լրատվական հաղորդումների գերակա թեմաներից մեկը, իսկ բանավիճային և «հյուր տաղավարում» ձևաչափի հասարակական-քաղաքական հաղորդումները հեռարձակման ցանցում բացակայում էին:

Մոտավորապես նույնը կարելի է ասել **Հ2-ի** մասին, թեև քարոզչությանը հատկացված եթերաժամանակի ծավալով և անդրադարձների հաճախությամբ այն զգալիորեն գերազանցել է «Արմենիային»: Չնայած այն բանին, որ Հ2-ը հեռարձակում է «Խոսքի իրավունք» հասարակական-քաղաքական հաղորդումը, սակայն հետազոտված ժամանակահատվածում այդ հաղորդաշարը հանրաքվեի թեմային անդրադարձել է միայն երկու հյուրի հետ զրույցների ընթացքում (ընդ որում մեկ անգամը՝ ընդամենը 13 վայրկյան տևողությամբ):

«Շանթ» հեռուստաալիքը, որը փետրվարի 17-ից մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում հետազոտված բոլոր հեռարձակողներից առանձնանում էր հարաբերականորեն չեզոք լուսաբանմամբ, հաջորդող 11 օրերին մինչև քարոզարշավի ընդհատումը, հանրաքվեի թեմայի նկատմամբ ավելի քննադատական մոտեցում է հանդես բերել: Հատկապես դա դրսևորվում էր մշտադիտարկման թեմատիկ երկրորդ (հանրաքվեին ներկայացված հարցը) և երրորդ (հանրաքվեի կազմակերպումը) կատեգորիաների նկատմամբ: Թեմատիկ առաջին կատեգորիայի (հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը) նկատմամբ բացասական վերաբերմունքն արտահայտվել է նաև մինչև մարտի 4-ը:

«Երկիր Մեդիայի» կողմից հանրաքվեի թեմային անդրադարձների ինտենսիվության վրա, հնարավոր է, ազդեցություն է ունեցել այն հանգամանքը, որ այդ հեռարձակողի մոտ (ինչպես և մի շարք այլ ԶԼՄ-ների) ծագել են իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչներին եթեր, հատկապես բանավիճային հաղորդումներին, հրավիրելու հետ կապված դժվարություններ: «Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչները այս

հեռուստաալիքի եթերում ոչ մի անգամ չեն հայտնվել: Զգտելով որոշակի հավասարակշռություն պահպանել, նկատի ունենալով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից մշտադիտարկման ենթակա լինելու հանգամանքը, իշխանությունների ընդդիմախոսները այս հաղորդումներին հաճախ չեն հրավիրվել: Ընդհանուր առմամբ, այս հեռարձակողի մոտ քիչ թե շատ հավասարակշիռ լուսաբանում է արձանագրվել թեմատիկ երկրորդ կատեգորիայի (հանրաքվեին ներկայացված հարցը) առնչությամբ. «այո»-ն և «ոչ»-ը բավական մոտ են եղել՝ 21 և 24 անդրադարձ համապատասխանաբար: Սակայն թեմատիկ մյուս երկու կատեգորիաներով այստեղ արձանագրվել է զգալի անհավասարակշռություն՝ հօգուտ հանրաքվեի նկատմամբ քննադատական վերաբերմունքի:

«Կենտրոնը», ճիշտ ինչպես «Արմենիան», եթերում չունի բանավիճային ուղղվածության հաղորդումներ: Լուրերից բացի, որտեղ, ըստ հեռուստաընկերության ներկայացուցիչների, իրենք բարդությունների էին բախվում «Ոչ» քարոզչության կողմի դիրքորոշումները լուսաբանելիս՝ այն պատճառով, որ վերջինը քարոզչական միջոցառումներ չի անցկացնում, հանրաքվեն լուսաբանվում էր «Անցուդարձ» (մամուլի տեսություն) հաղորդաշարում, որտեղ, հակառակը, հիմնականում հողում էին կատարում ընդդիմադիր տրամադրվածություն ունեցող ԶԼՄ-ների:

«Արմնյուսին» առանձնացնում էր այն, որ այս հեռարձակողի եթերում ավելի շատ հնչել են արտահայտություններ հօգուտ «այո»-ի, քան «ոչ»-ի (55 և 35 համապատասխանաբար), սա եղել է հիմնականում այն բանի շնորհիվ, որ 2020թ. փետրվարի 25-ի «Այո»-ի մեկնարկային քարոզչական միջոցառումը հեռարձակվել է ուղիղ եթերում, իսկ դրա առանձին դրվագներ հետագայում կրկնվել են: Ընդհանուր առմամբ, այս հեռուստաալիքի կողմից հանրաքվեի լուսաբանման մեջ գերակշռում էր դրա նկատմամբ բացասական վերաբերմունքը: Դա հատկապես արտահայտվում էր «հյուր տաղավարում» ձևաչափի հաղորդումներում: Ընդ որում, իրենց դիրքորոշումն ակտիվ կերպով հայտնում էին այս հաղորդումների ոչ միայն հյուրերը, այլ նաև լրագրողներն իրենք:

5-րդ ալիքում, որտեղ մինչև մարտի 4-ը, որով եզրափակվել է մշտադիտարկման առաջին միջանկյալ հաշվետվությունը, նույնպես գերակշռում էր հանրաքվեի նկատմամբ կտրուկ քննադատական վերաբերմունքը: Հետագայում, համաձայն բացառապես քանակական տվյալների, պատկերը մի փոքր փոխվել է: Այսպես, թեմատիկ երկրորդ կատեգորիայով (հանրաքվեին ներկայացված հարցը) «այո»-ն, մինչև քարոզարշավի և հետևաբարար նաև մինչև մշտադիտարկման ընդհատումն ընկած ողջ ժամանակահատվածի ընթացքում, նույնիսկ զգալի առավելություն է ստացել «ոչ»-ի նկատմամբ (47՝ 10-ի դիմաց): Սակայն լսարանի վրա ընդհանուր ազդեցության իմաստով այն սյուժեները, որտեղ փողոցում մարդիկ արտահայտվում էին հօգուտ «այո»-ի, չի կարելի հանրաքվեն նախաձեռնած իշխանությունների համար բարենպաստ համարել. դրանցում շեշտը դրվում էր համաժողովրդական քվեարկության դրված հարցի էությունը հասարակության կողմից չընմբռնելու վրա: Առավել ակնհայտ կերպով այս հեռարձակողի դիրքորոշումը ի հայտ էր գալիս հանրաքվեի կազմակերպման հարցերի (թեմատիկ երրորդ կատեգորիա) լուսաբանումներում՝ բացասական կոնտեքստով 42 անդրադարձ և զրո դրական՝ 78 չեզոք անդրադարձների դիմաց:

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՑ մինչև քարոզարշավի ընդհատումը (2020թ. փետրվարի 17-ից մարտի 15-ը) «Այո» քարոզչության կողմն ունեցել է զգալի առավելություն՝ ակտիվորեն քարոզչական միջոցառումներ անցկացնելու շնորհիվ: Այնուհետև, բոլոր ութ հեռարձակողների հանրագումարային եթերաժամանակով հետևում են «ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, անկուսակցական քաղաքական գործիչներ» և «Քաղաքացիական հասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստները» խմբերը: Առաջատարների եռյակին էականորեն զիջում են «Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչները և խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերը:

Խորհրդարանական երեք ուժերից մոտավորապես նույն ուշադրությանն են արժանացել (եթերաժամանակի ծավալով) «Իմ քայլը» դաշինքը և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը: Այստեղ, իհարկե պետք է նկատի ունենալ, որ «Իմ քայլի» մի շարք ներկայացուցիչներ տվյալ մշտադիտարկման շրջանակներում նույնականացվում էին նաև որպես «Այո»-ի կողմ և երբեմն նաև՝ որպես իշխանական կառույցների ներկայացուցիչներ, այլ կերպ ասած, որպես անդրադարձների հեղինակներ, արձանագրվում էին երեք տարբեր խմբերում և այսպիսով, լուսաբանման տեսանկյունից քաղաքական մյուս ուժերի համեմատությամբ մրցակցությունից դուրս էին: Նրանց առավելությունը շատ ավելի համոզիչ կլիներ, եթե նրանք չխուսափեին ընդունել մի շարք հեռուստաընկերությունների հրավերները: «Լուսավոր Հայաստանը» հետազոտված հեռարձակողների կողմից արժանացել է շատ ավելի նվազ ուշադրության, քան մյուս երկու քաղաքական ուժերը, որոնք ներկայացված են խորհրդարանում, և նույնիսկ որոշ արտախորհրդարանական կուսակցություններ: Այս փաստը վկայում է այն մասին, որ եթերի մատչելիության առավելությունը պահպանվում է այն քաղաքական ուժերի համար, որոնց հետ կապակցված են վերգետնյա կոնկրետ հեռարձակողներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌԱՐԶԱԿՎՈՂ ԶԼՄ-ներում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի (որը նախապես ծրագրված էր անցկացնել 2020թ. ապրիլի 5-ին) լուսաբանման մշտադիտարկումն անցկացրել է Երևանի մամուլի ակումբը՝ «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է ամերիկյան ժողովրդի շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից:

Մշտադիտարկումն ընդգրկել է **2020թ. փետրվարի 17**-ից (քարոզարշավի պաշտոնական մեկնարկից) **մարտի 15**-ն ընկած ժամանակահատվածը: 2020թ. մարտի 16-ին կորոնավիրուսի տարածման պատճառով Հայաստանում հայտարարվեց արտակարգ դրություն, և հետաձգվեցին թե հանրաքվեն, թե քարոզարշավը: 2020թ. մարտի 16-ին ընդհատվել է նաև մշտադիտարկումը, և այն կվերականգնվի քարոզարշավի հետ միաժամանակ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ էին ստացված քանակական և որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել և սահմանել.

- հանրաքվեի նկատմամբ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների ուշադրության աստիճանը,
- հանրաքվեի անցկացման, «կողմ» և «դեմ» կարծիքների մասին ամենատարբեր դիրքորոշումների ներկայացման հավասարակշռվածության աստիճանը,
- Սահմանադրական դատարանի անդամների լիազորությունների դադարեցման կապակցությամբ՝ հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ էլեկտորատի տեղեկացվածության լիարժեքությունը,
- հանրաքվեի ամբողջ գործընթացի կազմակերպմանը վերաբերող հարցերի լուսաբանման հետևողականությունը,
- որքանով են լրատվամիջոցները հետևել քարոզարշավի լուսաբանումը կարգավորող օրենսդրության դրույթներին, լրագրողական էթիկայի սկզբունքներին, ինչպես նաև որքանով են նպաստել ապատեղեկատվության դեմ հակազդեցությանը:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են հետազոտման քանակական և որակա-քանակական մեթոդները: Քանակական մեթոդները ներառում էին հեռուստատեսային բովանդակության միավորների և

ծավալների զուտ թվաբանական հաշվարկները: Որակա-քանակական մեթոդները հիմնվում էին բովանդակության այն միավորների հաշվարկի վրա, որոնք մշտադիտարկման թիմի կողմից որոշակի վերլուծության են ենթարկվել:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԸՆԴԳՐԿԵԼ է 8 հեռարձակող ԶԼՄ.

- *համազգային վերգետնյա հեռուստաալիքներ* ՝ **Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (ՀՀՀ Առաջին ալիք), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2)** և **«Շանթ»**,

- *մայրաքաղաքային վերգետնյա հեռուստաալիքներ* ՝ **«Արմնյուս»** և **5-րդ ալիք**:

Վերոնշյալ հեռուստաալիքներում հետազոտման են ենթարկվել երեկոյան պրայմ-թայմին (**18.00-00.00**) հեռարձակվող լրատվական, լրատվական-վերլուծական ծրագրերը և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները:

Մշտադիտարկման առարկա են դարձել հեռուստանյութերը, որոնք պարունակում էին հասարակության տարբեր հատվածների ներկայացուցիչների անդրադարձները՝

- հանրաքվեի անցկացման օրինականությանն ու նպատակահարմարությանը,

- Սահմանադրական դատարանի անդամների լիազորությունների դադարեցման կապակցությամբ ՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին ներկայացված հարցին,

- հանրաքվեի կազմակերպմանը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստանյութն** էր:

Հեռուստանյութ ասելով հասկանում ենք.

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

- լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

- հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

- հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ (միջարկում, բլյում և այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

- սյուժեների ներծրագրային ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,

- հեռուստասյուժեին (ռեպորտաժին և այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրև այդ սյուժեի (ռեպորտաժի և այլն) մաս:

Ընդսմին.

- Լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերը բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,

- Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները դիտարկվել են հետևյալ կերպ.

1. եթե հաղորդումը նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

II. Մշտադիտարկման թիմն օրական արձանագրում էր հետազոտվող եթերի տևողությունը՝ 18.00-00.00-ին հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **18.00**-ին, չեն դիտարկվել, մշտադիտարկումն սկսվել է տվյալ հաղորդման ավարտից հետո: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **00.00**-ին, դիտակվել են ամբողջությամբ, մինչև դրանց ավարտը:

Մշտադիտարկման **չեն ենթարկվել.**

- հանրաքվեի քարոզչության բլոկները,
- առևտրային/սոցիալական գովազդը/հայտարարությունները,
- վազող տողը:

III. Մշտադիտարկման ընթացքում **պարզվել և արձանագրվել է**.

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ հանրաքվեի անցկացմանը, Սահմանադրական դատարանի անդամների լիազորությունների դադարեցման կապակցությամբ՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին ներկայացված հարցին և հանրաքվեի կազմակերպմանը:

2. Մշտադիտարկման թեմային անդրադարձները հեռուստանյութերում

Կազմվել է անդրադարձների հեղինակների՝ սուբյեկտների, ինչպես նաև այդ անդրադարձների օբյեկտների ցուցակը:

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ
3.	ՀՀ կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ
4.	ՀՀ արդարադատության մարմինների, իրավապահ/քննչական մարմինների, անվտանգության մարմինների ներկայացուցիչներ
5.	ՀՀ Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ
6.	ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ
7.	*ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժեր.*
	«Իմ քայլը» դաշինք
	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)
	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն (ԼՀԿ)
8.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, անկուսակցական քաղաքական գործիչներ
9.	Քաղաքացիական հասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ
16.	Vox populi
17.	Այլ

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

1.	Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը
2.	Սահմանադրական դատարանի անդամների լիազորությունների դադարեցման կապակցությամբ՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին ներկայացված հարցը
3.	Հանրաքվեի կազմակերպումը

Մշտադիտարկման թեմային հեղինակների անդրադարձները հետազոտվել են հետևյալ կերպ՝

- Չափվում էր մշտադիտարկման թեմայով՝ հանրաքվեի անցկացման, դրանում ներկայացված հարցի և հանրաքվեի կազմակերպման մասին հեղինակների արտահայտություններին հատկացված **եթերաժամանակը** *(վրկ)*,

- Հաշվարկվում էր մշտադիտարկման թեմային **հեղինակների անդրադարձների** քանակը *(միավոր)*,

- Պարզվում և արձանագրվում էր նյութում մշտադիտարկման թեմային անդրադարձների բնույթը՝ **դրական (+)**, **բացասական (-)** կամ **չեզոք (0)**:

Այստեղ և այսուհետ գործել է հետևյալ սկզբունքը.

- միևնույն նյութում միևնույն հեղինակի անդրադարձը (բնորոշիչ նշանը) մշտադիտարկման թեմային արձանագրվել է մեկ անգամ, անկախ այն բանից, թե այն քանի անգամ է կրկնվել նյութում,

- եթե նյութում միևնույն հեղինակը տարբեր օբյեկտների է անդրադարձել, ապա դրանցից յուրաքանչյուրը արձանագրվել է (կրկին մեկական անգամ) համապատասխան սյունակում,

- եթե նյութում կային մի քանի տարբեր կամ միևնույն խումբը ներկայացնող հեղինակների անդրադարձները մեկ կամ մի քանի օբյեկտների, ապա դրանք բոլորը (ինչպես նաև բնորոշիչ նշանը) արձանագրվել են համապատասխան սյունակներում,

- «ԶԼՄ-ներ/լրագրողներ» խմբի ներկայացուցիչների անդրադարձները արձանագրվում էին տվյալ խմբում միայն այն դեպքերում, երբ նրանք արտահայտվում էին իրենց մասնագիտական դիրքերից (օրինակ, լրագրողը հանդես էր գալիս որպես հեռուստահաղորդման հեղինակ կամ հաղորդավար)։ Մնացած բոլոր դեպքերում մշտադիտարկման թիմը նրանց դասում էր այլ խմբերում, օրինակ, հարցազրույց տվող լրագրողը՝ կախված կոնկրետ դեպքից, նյութում նրան ներկայացնելու ձևից, կարող էր դիտարկվել որպես քաղհասարակության, փորձագիտական համայնքի ներկայացուցիչ կամ քաղաքացիական ակտիվիստ։

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում հեղինակների արտահայտությունները/դիրքորոշումը հօգուտ (+) կամ դեմ (-) հանրաքվեի անցկացման, դրանում ներկայացված հարցի, ինչպես նաև հանրաքվեի կազմակերպման տարբեր ասպեկտների մասին նրանց դրական կամ բացասական գնահատականները։ Մշտադիտարկման թիմի բոլոր կասկածները մեկնաբանվում էին հօգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն։

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

2020թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17 - ՄԱՐՏԻ 15

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Շանթ», «Արմնյուս», 5-րդ ալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																	794
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ															
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը					
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			
				+	–	0			+	–	0			+	–	0	
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	1096	18	12	0	6	9387.5	83	70	0	13	19723	275	14	0	261	
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	2997	39	0	39	0	2754	20	0	17	3	7550.5	129	0	20	109	
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	1444	8	4	0	4	1458	10	6	0	4	2098	69	0	0	69	
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	840	23	0	0	23	
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	12	2	0	0	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	86	2	2	0	0	183	1	0	0	1	5663	41	0	0	41	

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	365	13	6	0	7	3328	28	23	0	5	2262	77	1	0	76
	ԲՀԿ	2512	23	0	23	0	1681	8	0	8	0	1059.5	29	0	4	25
	ԼՀԿ	424	15	0	15	0	161	2	0	1	1	1716.5	49	0	23	26
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	9564.5	66	3	60	3	15501.5	67	9	51	7	3534	46	0	20	26
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	3724	38	1	25	12	9365	50	2	36	12	11916.5	62	0	23	39
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	1212.5	18	0	13	5	1895	43	0	14	29	7258.5	163	0	57	106
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	34	1	0	1	0	56	1	0	1	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	97	2	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	21	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	73.5	5	4	1	0	1768	144	104	14	26	182.5	14	0	7	7
17.	Այլ	627.5	9	0	9	0	596.5	10	0	10	0	2558.5	43	0	4	39
	Ընդամենը (միավոր)	**24256**	**259**	**33**	**186**	**40**	**48112.5**	**467**	**214**	**152**	**101**	**66418.5**	**1021**	**15**	**159**	**847**

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																	108
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ															
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը					
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			
				+	–	0			+	–	0			+	–	0	
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	102	3	2	0	1	2615	16	14	0	2	2778	31	1	0	30	
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	461	3	0	3	0	1125	5	0	5	0	1601	22	0	0	22	
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	1068	2	2	0	0	886	2	2	0	0	267	11	0	0	11	
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	457	13	0	0	13	
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	1051	9	0	0	9	

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	120	4	2	0	2	404	4	4	0	0	200	10	0	0	10
	ԲՀԿ	40	3	0	3	0	0	0	0	0	0	161	5	0	0	5
	ԼՀԿ	49	3	0	3	0	0	0	0	0	0	287	5	0	0	5
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	2822	24	2	19	3	4663	27	4	20	3	395	12	0	2	10
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	257	5	0	2	3	976	15	0	7	8	3534.5	10	0	0	10
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	0	0	0	0	0	432	17	0	0	17	502	16	0	0	16
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	97	2	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	0	0	0	0	0	172	17	9	2	6	0	0	0	0	0
17.	Այլ	0	0	0	0	0	0	0	0	0	0	733.5	10	0	0	10
	Ընդամենը (միավոր)	**5016**	**49**	**9**	**30**	**10**	**11273**	**103**	**33**	**34**	**36**	**11967**	**154**	**1**	**2**	**151**

«Արմենիա» հեռուստաալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																	18
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ															
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը					
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			
				+	–	0			+	–	0			+	–	0	
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	373	3	2	0	1	809	15	1	0	14	
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	13	1	0	1	0	0	0	0	0	0	127	3	0	0	3	
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	47	1	0	0	1	
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	68	2	0	0	2	
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	37	3	0	0	3	

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	6	1	0	0	1
	ԲՀԿ	17	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԼՀԿ	14	1	0	1	0	0	0	0	0	0	48	1	0	1	0
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	19	2	0	0	2
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	97	1	0	0	1
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	0	0	0	0	0	13	1	0	0	1	15	1	0	0	1
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
17.	Այլ	0	0	0	0	0	0	0	0	0	0	61	3	0	0	3
	Ընդամենը (միավոր)	**44**	**3**	**0**	**3**	**0**	**386**	**4**	**2**	**0**	**2**	**1334**	**33**	**1**	**1**	**31**

«Երկիր Մեդիա» հեռուստաալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																137
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ														
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը				
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)		
				+	–	0			+	–	0			+	–	0
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	507	12	12	0	0	3688	48	2	0	46
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	786	8	0	8	0	1142	5	0	2	3	2480	30	0	4	26
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	531	7	3	0	4	550	12	0	0	12
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	24	1	0	0	1
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	86	2	2	0	0	183	1	0	0	1	2500	9	0	0	9

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	172	8	4	0	4	208	4	4	0	0	582	16	0	0	16
	ԲՀԿ	167	6	0	6	0	144	3	0	3	0	52	4	0	0	4
	ԼՀԿ	23	3	0	3	0	0	0	0	0	0	436	13	0	9	4
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	1997	9	0	9	0	2552	8	2	5	1	685	8	0	2	6
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	862	9	0	8	1	2089	7	0	7	0	2676	10	0	2	8
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	293	2	0	2	0	580	3	0	3	0	752	14	0	13	1
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
17.	Այլ	38	4	0	4	0	38	4	0	4	0	402	5	0	0	5
	Ընդամենը (միավոր)	**4424**	**51**	**6**	**40**	**5**	**7974**	**54**	**21**	**24**	**9**	**14827**	**170**	**2**	**30**	**138**

«Կենտրոն» հեռուստաալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																	127
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ															
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը					
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			
				+	–	0			+	–	0			+	–	0	
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	161	4	4	0	0	711.5	9	8	0	1	2303	33	2	0	31	
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	251	4	0	4	0	41	3	0	3	0	283	9	0	2	7	
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	179	5	2	0	3	41	1	1	0	0	392	11	0	0	11	
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	109	3	0	0	3	
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	12	2	0	0	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	86	2	0	0	2	

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	0	0	0	0	0	45	2	2	0	0	135	5	0	0	5
	ԲՀԿ	716	7	0	7	0	549	3	0	3	0	553	9	0	3	6
	ԼՀԿ	14	2	0	2	0	0	0	0	0	0	235	6	0	2	4
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	710.5	3	0	3	0	308.5	3	0	3	0	0	0	0	0	0
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	297	2	0	2	0	208	1	0	1	0	208	1	0	1	0
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	561.5	10	0	7	3	314	7	0	6	1	1966.5	33	0	18	15
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	21	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	33.5	1	0	1	0	28	12	4	6	2	52	2	0	2	0
17.	Այլ	43.5	3	0	3	0	25.5	3	0	3	0	0	0	0	0	0
	Ընդամենը (միավոր)	**3000**	**44**	**6**	**30**	**8**	**2271.5**	**44**	**15**	**25**	**4**	**6322.5**	**114**	**2**	**28**	**84**

Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2)

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																	46
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ															
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը					
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			
				+	–	0			+	–	0			+	–	0	
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	50	2	2	0	0	523	11	11	0	0	826	19	2	0	17	
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	12	2	0	2	0	70	2	0	2	0	533	9	0	5	4	
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	180	6	0	0	6	
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	182	4	0	0	4	
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	456	6	0	0	6	

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	0	0	0	0	0	46	2	2	0	0	47	3	0	0	3
	ԲՀԿ	10	2	0	2	0	0	0	0	0	0	80	2	0	0	2
	ԼՀԿ	10	2	0	2	0	0	0	0	0	0	197	5	0	2	3
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	620	5	0	5	0	788	5	2	3	0	64	2	0	2	0
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	0	0	0	0	0	148	2	0	2	0	312	2	0	0	2
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	0	0	0	0	0	30	2	0	0	2	222	7	0	0	7
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	0	0	0	0	0	54	18	18	0	0	58	2	0	2	0
17.	Այլ	0	0	0	0	0	0	0	0	0	0	232	4	0	0	4
	Ընդամենը (միավոր)	**702**	**13**	**2**	**11**	**0**	**1659**	**42**	**33**	**7**	**2**	**3389**	**71**	**2**	**11**	**58**

«Շանթ» հեռուստաալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																	85
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ															
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը					
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			
				+	–	0			+	–	0			+	–	0	
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	348	4	1	0	3	503	9	6	0	3	1642	42	1	0	41	
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	785	9	0	9	0	376	5	0	5	0	1254.5	14	0	3	11	
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	197	1	0	0	1	0	0	0	0	0	148	12	0	0	12	
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	535	9	0	0	9	

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	73	1	0	0	1	137	2	1	0	1	590	8	0	0	8
	ԲՀԿ	0	0	0	0	0	0	0	0	0	0	29.5	2	0	0	2
	ԼՀԿ	0	0	0	0	0	0	0	0	0	0	29.5	2	0	0	2
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	790	6	0	6	0	347	6	1	3	2	474	13	0	5	8
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	227	12	0	5	7	485	7	0	7	0	135	4	0	0	4
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	156	3	0	0	3
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	0	0	0	0	0	14	2	0	2	0	37.5	3	0	3	0
17.	Այլ	0	0	0	0	0	0	0	0	0	0	132	9	0	0	9
	Ընդամենը (միավոր)	**2420**	**33**	**1**	**20**	**12**	**1862**	**31**	**8**	**17**	**6**	**5163**	**121**	**1**	**11**	**109**

«Արմնյուս» հեռուստաալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																202
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ														
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը				
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)		
				+	–	0			+	–	0			+	–	0
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	12	2	0	0	2	3338	11	10	0	1	6402	62	5	0	57
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	90	2	0	2	0	0	0	0	0	0	365	25	0	1	24
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	332	7	0	0	7
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	990	2	0	0	2

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	0	0	0	0	0	2477	13	10	0	3	419	17	1	0	16
	ԲՀԿ	1456	2	0	2	0	988	2	0	2	0	164	5	0	1	4
	ԼՀԿ	199	1	0	1	0	161	2	0	1	1	307	10	0	4	6
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	2401	17	0	17	0	4754	15	0	15	0	1809	7	0	7	0
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	1428	6	0	5	1	3188	10	1	9	0	2691	28	0	16	12
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	257	5	0	3	2	440	11	0	3	8	2296	58	0	2	56
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	34	1	0	1	0	56	1	0	1	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	40	4	4	0	0	845	47	34	2	11	35	7	0	0	7
17.	Այլ	0	0	0	0	0	469	2	0	2	0	978	9	0	2	7
	Ընդամենը (միավոր)	**5883**	**39**	**4**	**30**	**5**	**16694**	**114**	**55**	**35**	**24**	**16844**	**238**	**6**	**34**	**198**

5-րդ ալիք

2020թ. փետրվարի 17 - մարտի 15

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հեռուստանյութերի ընդհանուր քանակը (միավոր)																71
ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ		ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ														
		Հանրաքվեի անցկացման օրինականությունն ու նպատակահարմարությունը					Հանրաքվեին ներկայացված հարցը					Հանրաքվեի կազմակերպումը				
		Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)			Հեղինակներին հատկացված եթերային ժամանակը (վրկ)	Հեղինակների անդրադարձ-ների քանակը (միավոր)	Հեղինակների անդրադարձների բնույթը (միավոր)		
				+	–	0			+	–	0			+	–	0
1.	«Այո» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	423	3	3	0	0	817	12	7	0	5	1275	25	0	0	25
2.	«Ոչ» քարոզչության կողմի ներկայացուցիչներ	599	10	0	10	0	0	0	0	0	0	907	17	0	5	12
3.	Կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	182	9	0	0	9
4.	Արդարադատության/ իրավապահ/քննչական/ անվտանգության մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
5.	Սահմանադրական դատարանի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
6.	ԿԸՀ, ՀՌՀ, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	8	1	0	0	1

7.	*ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր.*															
	«Իմ քայլը» դաշինք	0	0	0	0	0	11	1	0	0	1	283	17	0	0	17
	ԲՀԿ	106	2	0	2	0	0	0	0	0	0	20	2	0	0	2
	ԼՀԿ	115	3	0	3	0	0	0	0	0	0	177	7	0	5	2
8.	ԱԺ անկախ պատգամավորներ, արտախորհրդարանական քաղաքական ուժեր/անկուսակցական քաղաքական գործիչներ	224	2	1	1	0	2089	3	0	2	1	88	2	0	2	0
9.	Քաղհասարակություն, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղակտիվիստներ	653	4	1	3	0	2271	8	1	3	4	2263	6	0	4	2
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ	101	1	0	1	0	86	2	0	2	0	1349	31	0	24	7
11.	Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
12.	Արցախի հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
13.	Սփյուռքի ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
14.	Օտարերկրյա պաշտոնական անձինք	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
15.	Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
16.	Vox populi	0	0	0	0	0	655	48	39	2	7	0	0	0	0	0
17.	Այլ	546	2	0	2	0	64	1	0	1	0	20	3	0	2	1
	Ընդամենը (միավոր)	**2767**	**27**	**5**	**22**	**0**	**5993**	**75**	**47**	**10**	**18**	**6572**	**120**	**0**	**42**	**78**